ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 21 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Զ. Ղուկասյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացիներ՝ Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և Ագնեսա Բաղդասարյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացիներ Իրինա Օգանեզովան, Աննա Բաղդասարյանը և Ագնեսա Բաղդասարյանը դիմել են Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ կետի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների և 69 հոդվածի 1,2,4,5 կետերի, ինչպես նաև սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Դիմումատուները պահպանել են Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով՝ Սահմանադրական դատարանի 1-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և Ագնեսա Բաղդասարյանի դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻ ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ